ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ
Պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

1930-ական թվականների սկզբից Հայաստանի Կոմկուսի ճնշումը Հայոց եկեղեցու վրա ոչ միայն չթուլացավ, այլև էլ ավելի ուժեղացավ: 1930 թ. հունիս-հուլիս ամիսներին կայացած ՀամԿ/բ/Կ 16-րդ համագումարը իր բանաձևում արձանագրեց. «Կուսակցությունը պետք է ամրապնդի և զարգացնի կրոնի հետադիմական ազդեցությունից զանգվածների ազատագրության ասպարեզում ձեռք բերված էական հաջողությունները[1]»:

Բոլշևիկյան ղեկավարությունը շարունակում էր ցուցումներ տալ իր ստորին օղակներին՝ եկեղեցուն ճնշելու վերաբերյալ: Ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայաստանում այդ տարիներին հայտնի էր բոլշևիկյան հայտնի մի առած՝ «Կորչի չարիքը, կեցցե հնգամյակը չորս տարում»[2]:

Երկրում նոր թափով սկսեցին ավերել վանքերն ու եկեղեցիները: Նորքի Սիմեոն ծերունի եկեղեցին պայթեցվեց 1930 թ.: Բոլշևիկների մտահղացմամբ փակված եկեղեցիների սոսկ կանգուն հպարտ տեսքը ժողովրդին հուշում էր Աստծո և կրոնի գաղափարը, նրանց ուշադրությունը շեղելով ժամանակակից իրականությունից, «լուսավոր ապագայի կառուցումից»: Մոսկվայում քանդվեց Կազանյան տաճարը, իսկ Երևանում սկսեցին խոսել Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու նախապատրաստվող քանդման մասին: Այդ ընթացքում հնությունների պահպանության կոմիտեն կատարում էր այդ եկեղեցու վերակառուցման աշխատանքները: Իմանով, որ եկեղեցուն փտանգ է սպառնում, նրա պաշտպանությամբ ելույթ ունեցան հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանը և այդ նույն կոմիտեի գիտական քարտուղար Աշխարհաբեկ Քալանթարյանը, որոնք 1930 թվականի փետրվարի 6-ին և մարտի 2-ին նամակով դիմեցին Հայաստանի լուսժողկոմ Ա. Եղիազարյանին, որում գրում էին. «Կոմիտեն տեղեկացել է, որ Երևանի քաղխորհուրդը որոշել է քանդել Աբովյան փողոցում գտնվող Պողոս-Պետրոս եկեղեցին:

Կոմիտեն իր պարտքն է համարում հայտնել ձեզ, որ վերոհիշյալ եկեղեցին կառուցված է 1679 թվականի մեծ երկրաշարժից անմիջապես հետո: Դա Երևանի ամենահին շենքերից մեկն է, որովհետև երկրաշարժը հիմնովին ոչնչացրել էր քաղաքի բոլոր կառուցվածքները: Բացի դրանից, այն ունի իր վրա բազմաթիվ արձանագրություններ, քանդակներ, պատմական դուռը /Հին Բայազետից բերված/ և իր ամբողջությամբ ներկայացնում է 17-րդ դարի հայ ճարտարապետական պատկերը: Նրա կործանումը մի զգալի բաց պիտի առաջացնի Երևան քաղաքի շինարարության պատմության համար:

Ուստի և կոմիտեն խնդրում է ձեզ միջնորդել ժողկոմխորհի առաջ թույլ

---

[1] ՀամԿ/բ/Կ 16-րդ համագումար: Սղագրական հաշվետվություն, Մոսկվա, 1930 թ., էջ 715:

[2] «Անաստված» ամս., 1930 թ., հ. 4, էջ 3:

չտալ այդ հուշարձանի քանդումը, մանավանդ որ նրա կանգուն մնալը չի խանգարում նրա շուրջը քաղաքացիական շենքեր կառուցելու Աբովյան փողոցի և հրապարակի կողմից»[3]:

Ստանալով այս նամակը, լուսժողկոմը դիմեց ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ս. Սարգսյանին. «Ուղարկելով Ձեզ հնությունների պատմության կոմիտեի 1930 թվականի մարտի 2-ի գրությունը, լուսժողկոմս միջնորդում է, որպեսզի հնարավորություն տրվի կոմիտեին Պողոս-Պետրոս եկեղեցու ներսի ուսումնասիրությունները վերջացնելու:

Մինչ այդ կարելի էր քանդել զանգակատունը, իսկ կտուրը հետաձգել առայժմ, մինչև ուսումնասիրական աշխատանքների ավարտումը ներսում[4]»: Նույն թվականի փետրվարի 21-ին Ա. Թամանյանին և Ա. Քալանթարյանին պատասխանեց երքաղխորհրդի նախագահ Գ. Հանեսօղլյանը. «Հայտնում ենք, որ Պողոս-Պետրոս եկեղեցու մասին կան բազմաթիվ բանվորական կազմակերպությունների որոշումներ, որոնք հավանություն են ստացել քաղխորհրդի նախագահության կողմից:

Հիշյալ եկեղեցին, ճիշտ է, չի ընկնում քաղաքի հատակագծման տակ, սակայն այդ դեռ չի նշանակում, որ քաղխորհուրդը կարող է հանդուրժել, որպեսզի այդ եկեղեցին կանգուն թողնվի իր շրջակայքի կառուցվելիք նոր տների մեջ...[5]»:

Որպեսզի ավելի լավ ու ստույգ գնահատվեին Ս. Պողոս-Պետրոսի որմնանկարները՝ Մոսկվայից Երևան հրավիրվեց գեղանկարիչ-վերականգնող Գրիգորի Չիրիկովը, որը որմնանկարներին ծանոթանալուց հետո Հայաստանի լուսժողկոմին տեղեկացրեց. «Ապա, անցնելով գեղանկարչության շերտերի նյութի տեխնոլոգիային, և տեղի հայկական հնագրության ու նրա (եկեղեցուհեղ.) շրջակայքում իմ կարճատև այցելության ընթացքում հայտնաբերվեցին նյութեր և գրականության մեջ հիշատակություններ, որ գեղանկարչության յուղաներկ կերպը այստեղ հանդիպում է արդեն 10-րդ դարի սկզբին: Հավանաբար Արևելքի և մասնավորապես Հայաստանի ձեռագրերի ու գեղանկարչության նյութի խոր ուսումնասիրումը կհարկադրի փոխել Եվրոպական գիտական աշխարհում գոյություն ունեցող կարծիքը յուղաներկ կերպի առաջացման ժամանակաշրջանի մասին և կարևոր ճշտում կմտցնի գեղարվեստական գեղանկարչության մշակույթի ուսումնասիրման մեջ: ...Վերջում ուզում եմ կանգ առնել հենց իր՝ շենքի քանդման, հետևաբար, գոյություն ունեցող որմնանկարների փոխադրման հարցի վրա: Ես գտնում եմ, որ դա պահելու պայմանների ցանկացած փոխառության դեպքում կկորսվեն ինչպես ամբողջ գիտական հավաստիությունը, այնպես էլ արժեքավոր տվյալները, որոնցից ասես գիտական բազայից, աշխարհի գիտնականները ուսումնասիրության համար նյութ են քաղում:

Պահպանված գեղանկարչությունը վաղնջական ժամանակաշրջանի, դարերի ընթացքում գոյություն ունեցող եղանակների ուսումնասիրման

---

3 Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ.92, թ. 1:
4 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 551, թ. 5:
5 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 551, թ. 3-4:

ուղիների փարոս է հանդիսանում, ուստի գտնում եմ, որ շինությունը քանդելու մտքից պետք է մեկընդմիշտ հրաժարվել[6]»:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու զանգակատունը քանդման օրերին (1931 թ.)

Բոլշևիկները ոչ մի գնով չէին հրաժարվում եկեղեցին քանդելու իրենց մտադրությունից և սոսկ դրա ժամկետը երկարացրին, որպեսզի հանդարտվեն եկեղեցու շուրջը ծագած կրքերը: Իսկ այդ ընթացքում հուշարձանների պահպանության կոմիտեի մասնագետները շարունակում էին Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում կատարել վերականգնման աշխատանքները: Սակայն արդեն 1930 թվականի հոկտեմբերին, երբ աղավաղործկոմի կոմունալ տնտեսության բաժնի վարիչ Մարտիրոսյանը Հուշարձանների պահպանության կոմիտեին պահանջագիր ուղարկեց, որում ասվում էր. «Նկատի ունենալով, որ գալիք շինսեզոնը սկսվելուն պես քանդվում է քաղաքի նախկին Պողոս-Պետրոս եկեղեցին, ուստի խնդրվում է դադարեցնել ձեր կողմից այդ շենքում տարվելիք վերակառուցման աշխատանքները և առանձնացնել ու փոխադրել կառուցվածքներից այն մասերը, որոնք որպես հնություն որոշ արժեք ունեն ու անհրաժեշտություն են ներկայացնում կոմիտեիդ համար: Ժամկետ՝ 20-ը նոյեմբերի:

Ժամանակին անհրաժեշտ մասերը փչանալու դեպքում պատասխանատվությունն ընկնում է Ձեզ վրա[7]» :

1930 թվականի նոյեմբերի 6-ին Երևանի քաղաքային խորհրդի նախագահության նիստում լսվեց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման հարցը: Երքաղխորհրդի նախագահությունը որոշեց. «Նկատի ունենալով, որ այդ եկեղեցու շենքը չունի ոչ մի ճարտարապետական արժեք, գտնել անհրաժեշտ նրա քանդման աշխատանքները ավարտել[8]»: Եվ 1931

---

[6] ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 92, թ. 4-5:
[7] ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 552, թ.4:
[8] ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 552, թ.6:

թվականին «Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները խնամքով, շերտ առ շերտ տեղից հանվեցին այդ գործի լավագույն մասնագետների ձեռքով[9]»: Եկեղեցին քանդվեց:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ավերակները

Մինչ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ավերումը մասնագետները կարծում էին, որ կառուցվել է 17-րդ դարում հայտնի երկրաշարժից հետո: Սակայն քանդելուց հետո պարզվեց, որ «այն իր ներքին մասում դեռևս հարազատորեն պահել է 5-րդ դարի բազիլիկայի առանձնահատկությունները[10]»: Կործանվեց հնագույն ժամանակներից մեզ հասած և մշակութային-ճարտարապետական ու պատմական կարևորագույն նշանակություն ունեցող մի կառույց: Զուր չեն ասում, թե այստեղով անցել են ոչ թե բարբարոսները, այլ բոլշևիկները:

Ս. Կաթողիկե եկեղեցի

1937-38 թթ. Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների հաջորդ հարվածը ուղղված էր Երևանի Կաթողիկե եկեղեցուն: Նրա ավերումը տևեց «1936 թ. դեկտեմբերից մինչև 1937 թ. մարտ ամիսը[11]»: Կաթողիկեն գտնվում էր Երևան քաղաքի կենտրոնական մասում: Այդ թաղամասը առաջ կոչվել էր «Հին թաղ», իսկ ավելի վաղ՝ Շհար[12]: Ինչպես գրել է պատմաբան Կ. Դաֆթարյանը, «1936 թ. վերջերին, Կաթողիկե եկեղեցին ընկնում էր կառուցվելիք շենքերի տեղում: Այդ պատճառով հարց ծագեց նրա քանդման մասին: Սակայն, որպեսզի քանդման ընթացքում որևէ կարևոր բան չփչանա, Երևանի քաղաքային խորհուրդը ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտին դիմեց թույլտվություն ստանալու համար: Ինստիտուտը քանդումները չարգելեց, թույլ տվեց, բայց պայման դրեց, որ քանդումները կատարվեն հնագետի

---

9 Կ. Դաֆթարյան, «Երևանի միջնադարյան հուշարձանները», էջ 29:
10 Նույն տեղում, էջ 30:
11 Թ. Հակոբյան, «Երևանի պատմությունը», էջ 269:
12 Կ. Դաֆթարյան, «Երևանի միջնադարյան հուշարձաններ», էջ 17:

ամենօրյա հսկողության ներքո, որպեսզի որևէ կարևոր բեկոր չկորչի և չփչանա: Այն ժամանակ վերոհիշյալ կազմի մեջ էր գտնվում նաև պատմական հուշարձանների պետական մարմինը, որը և տողերիս գրողին նշանակեց այդ քանդումների հսկիչ-լիազոր: Մեր պարտականությունների մեջ էր մտնում օրվա բոլոր ժամերին հետևել քանդումներին, և եթե ի հայտ գային արժեք ներկայացնող բեկորներ կամ շենքի մասեր՝ ապահովել դրանց ապահովությունը:

Քանդումները սկսվեցին դեկտեմբեր ամսին և տևեցին մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը: Այդ քանդումները թեև կրկնակի կերպով երկար տևեցին հաճախակի մեր դրած արգելքների պատճառով, բայց Երևան քաղաքին պարգևեցին միջնադարյան մի հուշարձան... պատկանելիք 13-րդ դարի երրորդ կեսին[13]»:

Երևան. Կաթողիկե եկեղեցու գավթի արևմտյան ճակատը քանդման ընթացքում (1936-1937 թթ.)

Սոսկ հազվագյուտ, իսկական հայրենասերները, չվախենալով սարսափելի ժամանակներից, դիմադրեցին եկեղեցիները քանդող բարբարոսներին: Եզակի այս նվիրյալներից էր քսանական թվականների բռնություններից հրաշքով փրկված Երևանի համալսարանի պրոֆեսոր, հնագետ-պատմաբան Աշխարհաբեկ Քալանթարը՝ Արդվի գյուղի Լորիս-Մելիք-Քալանթարյանների ազնվական տոհմի ներկայացուցիչը: Նա՝ մեծ գիտնականը, հնագետը չէր կարող անտարբեր մնալ Հայաստանի պատմական արժեքների ճակատագրի հանդեպ: 1937 թ. հունվարի 19-ին Ա. Քալանթարը ընդարձակ նամակով դիմեց հայ բոլշևիկների ղեկավար Ամատունուն, ուր ասվում էր. «Ձեր ուշադրությունն

---

[13] Կ. Դաֆթարյան. «Երևանի միջնադարյան հուշարձանները». էջ 23:

եմ հրավիրում Կաթողիկեի՝ իբր կարևոր պամական հուշարձանի քանդումի վրա, որ ներկայումս կատարվում է Երևանում, քաղխորհրդի կողմից:

Երևանը հարուստ չէ պատմական հուշարձաններով, հազիվ երկու-երեք հատ, այն էլ վերջին դարերի անճաշակ նորոգումներով արտաքուստ այլանդակված դրությամբ, որով, սակայն նրանք կորցնում են իրենց գիտական արժեքը:

Կաթողիկեն պատկանում է խոր հնության: Ներկայիս շենքը իր պլանով 7-րդ դարի է, սակայն բազմիցս նորոգված և Կաթողիկե /այս կոչումը ճարտարապետական տիպը որոշող տերմին է/ վերջին մասը բոլորովին փոխված է: Շենքի արևմտյան մասը, որի մշակումը կատարված է 10-11-րդ դարերում, զարմանալիորեն մինչև այժմ մնացել է նույնությամբ, անավարտ, առանց ռեստավրացիաների մինչև իրեն վերին մասը՝ դիմանալով անգամ Երևանի մեծ երկրաշարժին 17-րդ դարում /1679 թ./, այդ երևում է նաև նրանից, որ գմբեթի հենց տակը գտնվում է մի կարևոր ընդարձակ արձանագրություն 13-րդ դարի սկզբի /հակառակի պես հենց այս մասում է այս բոպեիս կենտրոնացված քանդումը/:

Կաթողիկեն բոլորովին չի ուսումնասիրված և քանդումից առաջ էլ ոչ մի, թեկուզ նախնական հետազոտում չի կատարված: Այն հապճեպությամբ, որ կատարվում է այս քանդումը, հնարավոր չէ նայել անգամ, ուր մնաց ֆիկցիայի ենթարկել, ազատել կամ ուսումնասիրել բացվող արժեքները:

Բայց նրանք կան: ...Ֆրեզկաները /պատկերազարդերը- Ա.Կ./ /երկու-երեք շերտ իրար վրա/ ճարտարապետական կարևոր մանրամասնություններ...

Սրանք Երևանի հնագույն պատմության միակ փաստաթղթերն են, հայ արվեստի կոթողները, ուստի և անթույլատրելի է նրանց ոչնչացումն այն ձևով, ինչպես այդ կատարվում է ներկայումս քաղխորհրդի կողմից:

Ելնելով վերոհիշյալից, խնդրում եմ կարգադրել կանգնեցնել քանդումը և հանձնարարել հատուկ մասնագիտական ժողովին կատարելու շտապ հետազոտություն և նրա արդյունքն այդ հուշարձանի գիտական արժեքի մասին՝ ձեզ ներկայացնելու զեկուցագրով[14]»:

Ամատունին այս նամակի վրա մակագրեց. «Հանեսսոդլյանին: Խնդրում եմ հաստատել այս հարցը և մտցնել բյուրո», այսինքն այն նույն Հանեսսոդլյանին, որը ժամանակին Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման հեղինակներից մեկն էր, իսկ այժմ ավերում էր մեկ այլ պատմական կոթող: Պրոֆեսոր Ա. Քալանթարյանի մասին շուտով մոռացան, իսկ նրա առաջ քաշած հարցը այնպես էլ չքննարկեցին կենտկոմի բյուրոյում և նամակը անհետացավ արխիվներում: Իսկ Կաթողիկեն շարունակում էին քանդել, որն ավարտվեց 1937 թ. մարտին: Նույն 1937 թվականին, որպես ժողովրդի թշնամի, գնդակահարվեց նաև Հայոց Եկեղեցու պաշտպաններից մեկը՝ Աշխարհաբեկ Քալանթարը:

---

14 ՀՀՀ ՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 52, թ. 120:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Քառասնական թվականների երկրորդ կեսին քանդվեցին Երևանի Ս. Աստվածածին և Ս. Լուսավորիչ եկեղեցիները: Նորքի Ս. Աստվածածին եկեղեցին քանդվեց 1947 թվականին[15]: Իսկ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին քանդվեց 1949 թվականի ամռանը:

Երևան. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:
Ավերվել է 1949 թ.

Ստալինի ծննդյան 70-ամյակի առթիվ հայ բոլշևիկները նվեր էին պատրաստել՝ քանդեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ինչպես գրել է Երվանդ Շահազիզը, «Երևանի նոր եկեղեցին Ս. Լուսավորիչն է, որը կառուցվել է «Խանլըղ բաղում», կամ Նոր թաղում, դրա համար թողնված հրապարակում: Դրա հիմքը ձգվել է 1869 թվականին և ավարտվել է 1900-ին[16]»: Ս. Լուսավորիչ եկեղեցին գործել է 1900-1926 թթ.: Քսանական թվականներին այն վերածվեց «Անաստված» կինո և տիկնիկային թատրոնների: 1947 թվականի մայիսի 14-ին ջրհեղեղի պատճառով այստեղ բնակություն էին հաստատել տուժածները: Եկեղեցին սկսեցին քանդել 1949 թ. ամռանը: Իշխանությունները ստիպում էին, որպեսզի եկեղեցին քանդեն գերմանական ռազմագերիները: Սակայն վերջիններս հրաժարվեցին: Իշխանությունները Ամիրյան փողոցը փակեցին 10-15 բեռնատար ավտոմեքենաներով, ապա եկեղեցու գմբեթի խաչը կապելով ճոպանով և միացնելով բեռնատարին, ձգեցին, և խաչը տապալվեց: Երկու ամիս անընդհատ քանդում էին եկեղեցին, բայց չէին կարողանում ավերել՝ չափից ավելի ամուր էր մինչխորհրդային կառույցը: Հետո եկեղեցու մի մասը քանդեցին՝ պատի մեջ լցնելով պայթուցիկ

---

[15] Ս. Ստեփանյանց, «հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք», Ե., 1994 թ., էջ 202-203:
[16] Ե. Շահազիզ, «Հին Երևանը», Ե., 1931 թ., էջ 221:

նյութ: Պատն ամբողջությամբ փլվեց: Հետագայում քարերի մի մասն օգտագործվեց դպրոցի շինարարության համար[17]:

Մի տեսարան (20-ական թվականների վերջ) Երևանի կենտրոնից
Կենտրոնում՝ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին

Ինչպես արդարացի նկատել է Ա. Քալանթարը, Երևանը հարուստ չէր պատմական հուշարձաններով և եղածը պետք էր զգուշությամբ և ապահով պահպանել գալիք սերունդների համար և ոչ թե նման բարբարոս ձևերով Երևանը զրկել իր հոգևոր ժառանգությունից ու հարստությունից:

17 Ս. Ստեփանյանց, «Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք», էջ 217-218: